Տաթևիկ
ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի համալսարանում՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0001-6488-2717

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀՆԴԿԱԿԱՆ ԿԻՆՈՆ». ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀՆԴԻԿ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ «ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄ» ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.1-68

Հիմնաբառեր. *միգրացիա, հնդիկ միգրանտներ, ՀՀ տնտեսություն, սահմանահատումներ, կացության կարգավիճակ, գործատուներ*

Հատկապես վերջին տարիներին հայկական միապարար ժողովրդագրական պատկերում երևան են եկել հնդկական «երանգներ»: Անզեն աչքով տեսանելի է հնդիկ միգրանտների՝ տարեցտարի ուժգնացող հոսքը դեպի Հայաստան, որի արդյունքում «կերպարանափոխվում» են մեր տնտեսության մի շարք ոլորտներ: Հաշվի առնելով այն, որ տարիներ շարունակ Հայաստանը համաշխարհային տնտեսության մեջ միգրացիայի ծագման երկիր է, հայկական միգրացիոն համայնապատկերի «հնդկականացումը» բավական հետաքրքրական և, ինչ-որ առումով, զարմանալի երևույթ է:

Այս հոդվածում կատարվել է Հայաստանի վերջին միգրացիոն զարգացումների ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություն՝ Հնդկաստանից միգրացիոն հոսքերի ակտիվացման համատեքստում: Ի վերջո, հոդվածի նպատակն է հասկանալ՝ ինչու և ինչպես է Հայաստանի տնտեսությունը դառնում այն հնդկական կինոյի «աստղը», որի հանդիսատեսը բոլորս ենք:

Միգրացիան յուրահատուկ դրսևորում է, որը միավորում է պետություններն ու ազգերը՝ ստեղծելով սոցիալական, տնտեսական, հոգեբանական, մշակութային և քաղաքական կապեր երկրների միջև: 21-րդ դարը կարելի է համարել միգրացիայի դարաշրջան, քանի որ մինչ այդ երբևէ այս երևույթը քաղաքական, տնտեսական և հասարակական նման հնչեղություն չէր ստացել: Այս համատեքստում մեծ նշանակություն ունի մարդկանց տեղաշարժի ուսումնասիրությունը, ինչի մի-

ջոցով հնարավոր է բացահայտել այն խորքային պատճառները, որոնք հանգեցրել են միջազգային միգրացիայի այսչափ աշխուժացմանը: Հաշվի առնելով անընդհատ ընդլայնվող հոսքերը՝ միջազգային միգրացիան շարունակում է մնալ երկրների տնտեսության զարգացման ապահովման հնարավորություն և սպառնալիք: Այս մոտեցումն իրատեսական է և՛ ավելցուկային աշխատանքային ռեսուրս ունեցող, և՛ այն երկրներում, որտեղ աշխատուժը քանակապես ու որակապես չի կարողանում բավարարել աշխատաշուկայի պահանջները: Միգրացիան հսկայական ազդեցություն ունի երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական, էթնիկական, կրոնական, մշակութային պատկերի վրա: Առանց միգրացիոն հոսքերի հստակ հաշվառման հնարավոր չէ կանխատեսել մի շարք սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, իսկ միգրանտների դրամական փոխանցումները բազմաթիվ երկրներում (այդ թվում՝ Հայաստանում) համախառն ներքին արդյունքի և բնակչության իրական եկամուտների զգալի մասն են:

Հատկապես վերջին մի քանի տարիներին, պայմանավորված աշխարհաքաղաքական իրադարձություններով (COVID-19 համավարակ, ռուս-ուկրաինական ընթացիկ հակամարտություն, 2020 թվականի 44-օրյա պատերազմ, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի ներխուժումը Արցախ, որի հետևանքով ավելի քան 100 հազար բռնի տեղահանված արցախահայեր մուտք գործեցին Հայաստան և այլն), Հայաստանի միգրացիոն համայնապատկերը բավական շատ փոփոխվեց, որին նպաստեց նաև հնդիկ միգրանտների տեսակարար կշռի ավելացումը:

Դեռևս 2018-2019 թվականներից սկսած՝ Հնդկաստանի քաղաքացիների՝ դեպի Հայաստան մուտքի սահմանահատումների քանակը շարունակաբար աճում է: Այսպես, օրինակ, 2018 թվականին, նախորդ տարվա համեմատ, Հնդկաստանի քաղաքացիների մուտքի թիվն ավելացել է 169.3%-ով (2018 թ.՝ 31213 մարդ), իսկ 2019 թվականին, նախորդ տարվա համեմատ, 24.1%-ով: ՀՀ կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների թիվը, 2017 թ. համեմատ, 2018 թ. ավելացել է 118.8%-ով[1]: Հնդիկների 98.6%-ը 2018 թ. ստացել է ժամանակավոր կացության կարգավիճակ՝ ուսման նպատակով: Բայց և այնպես, ուսմանը զուգահեռ, նրանք ներգրավված են նաև ՀՀ աշխատանքի շուկայում, հատկապես՝ ցածր որակավորում պահանջող աշխատանքներում, մասնավորապես՝ շինարարության ոլորտում: Հայաստանում կացության կարգավիճակ ստացած հնդիկների թվի աճը պայմանավորված է էժան և որակյալ բժշկական կրթություն ստանալու հեռանկարով, ինչպես նաև 2017 թ. Հնդկաստանի հետ վիզային քաղաքականության փոփոխությամբ[2], որով մեզանում բավական դյուրացվել են վիզա ստանալու ընթացակարգերը Հընդկաստանի քաղաքացիների համար:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի սահմանային գրանցումների վերլուծության տվյալների՝ 2020 թվականին Հնդկաստանի անձնագրով ՀՀ է մուտք գործել 3311 քաղաքացի, իսկ 2022 թվականին այդ ցուցանիշն աճել է մոտ 7 անգամ՝ կազմելով 22979 մարդ: Ընդ որում, ՀՀ սահմանային գրանցումների արդյունքներից երևում է, որ, 2022 թվականի համեմատ, միայն 2023 թվականի հունվար-նոյեմբերին Հնդկաստանի անձնագրով մարդկանց մուտքերը Հայաստան աճել են 112.4%-ով՝ կազմելով 48798 սահմանահատում:

Մյուս կողմից՝ հարկ է արձանագրել, որ դիտարկվող ժամանակահատվածում Հնդկաստանի քաղաքացիների ՀՀ սահմանային մուտքերն ընդհանուր սահմանային մուտքերի միջինում 0.9%-ն են: Այսպես՝ 2020 թվականին Հնդկաստանի քաղաքացիների սահմանային մուտքերը ՀՀ ընդհանուր սահմանային մուտքերի 0.4%-ն էին, իսկ արդեն 2023 թվականի հունվար-նոյեմբերին՝ 1.1%-ը:

[1] Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պաշ-տոնական կայք, http://www.migration.am/statistics

[2] ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N329-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1435-Ն որոշում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հնդկաստանի քաղաքացիների սահմանային գրանցումները ՀՀ-ում[3]

Հնդկաստանի անձնագրերով ՀՀ ելքային սահմանահատումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, 2020 թվականի համեմատ, 2022 թվականին ցուցանիշն աճել է 3.7 անգամ՝ կազմելով 21968 սահմանահատում: Իսկ 2023 թվականի հունվար-նոյեմբերին, 2022 թվականի համեմատ, ցուցանիշն աճել է 49.7%-ով՝ կազմելով 32883 սահմանահատում:

ՀՀ-ում կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ, 2020 թվականի համեմատ, 2023 թվականին կացության կարգավիճակ ստացածների թիվն ավելացել է 78.5-ով՝ կազմելով 2035 մարդ: Ընդ որում, ՀՀ-ում կար-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների թիվն ու տեսակարար կշիռը ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների մեջ[3]

[3] ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», 2023, https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf, էջ 157, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-նոյեմբերին», https://armstat.am/file/article/sv_11_23a_510.pdf, էջ 151 (մուտք՝ 4.02.2024 թ.)

[4] ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_23a_510.pdf, էջ 186, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_22a_510.pdf , էջ 183, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf, էջ 165, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_20a_520.pdf, էջ 158 (մուտք՝ 4.02.2024 թ.):

գավիճակ ստացած օտարերկրացիների մեջ Հնդկաստանի քաղաքացիների տեսակարար կշիռը դիտարկվող 2020-2023 թվականներին կազմել է միջինը 20.2%:

2023 թվականին Հնդկաստանի քաղաքացիների 98%-ը Հայաստանում ստացել է ժամանակավոր, իսկ մնացածը՝ մշտական կացության կարգավիճակ: Ընդ որում, ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների կարգավիճակի տրման հիմքերի ուսումնասիրությունը բացահայտում է, որ 94.4%-ը կամ 1882 մարդ ուսման նպատակ ունի, 3.8%-ը կամ 75 մարդ՝ ընտանիքի հետ միավորվելու, իսկ 1.8%-ը կամ 37 մարդ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու: Միաժամանակ, Հայաստանում մշտական կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի քաղաքացիների տվյալները ցույց են տալիս, որ նրանց 46.3%-ը կամ 19 մարդ համապատասխան կարգավիճակ է ստացել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, 39%-ը կամ 16 մարդ՝ առնվազն 3 տարի այստեղ բնակվելու համար, իսկ 6 քաղաքացի՝ պայմանավորված հայ լինելու հանգամանքով:

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության workpermit.am հարթակի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2023 թվականի 2-րդ կիսամյակում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած Հնդկաստանի 1054 քաղաքացիների 96.8%-ը կամ 1020 մարդ արական սեռի է, իսկ մնացածը՝ իգական: Մյուս կողմից, Հնդկաստանի՝ ժամանակավոր կացության կարգավիճակով քաղաքացիների տեսակարար կշռում մեծ թիվ են կազմում հատկապես 16-34 տարիքային խմբի մարդիկ (68.2%-ը կամ 719 մարդ), որին հաջորդում է 35-64 տարիքային խումբը, որտեղ կարգավիճակ է ստացել 335 մարդ կամ ընդհանուրի 31.8%-ը[5]:

ՀՀ պաշտոնական վիճակագրական աղբյուրների վերլուծությունն իրականում մի շարք խնդիրներ է պարունակում, քանի որ միգրացիային առնչվող վիճակագրությունը Հայաստանում բավական խրթին է, և դժվար է, ի վերջո, հասկանալ, թե հնդիկ միգրանտների թիվն այս պահին մեր երկրում որքան է: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի վերջին հայտարարության՝ այս պահին ՀՀ-ում աշխատանքային գործունեություն են ծավալում 20–30 հազար հնդիկ միգրանտներ[6]:

Հասկանալու համար, թե ՀՀ տնտեսության ո՞ր ոլորտներում են ինտեգրվում հնդիկ միգրանտները, և ի՞նչ առավելություններ ու թերություններ է պարունակում նրանց հետ աշխատելը, հարցումներ ենք կատարել մոտ երկու տասնյակ գործատուների շրջանում, որոնք ունեն հնդիկ աշխատակիցներ: Հայաստանյան գործատուների կարծիքով՝ հնդիկ միգրանտների հոսքի ավելացումը դրականորեն է ազդել մեր տնտեսության վրա, քանի որ, նրանց շնորհիվ, ի վերջո, մեղմվել է ցածր որակավորում պահանջող աշխատատեղերի առաջարկի ու պահանջարկի միջև եղած անհավասարակշռությունը: Գործատուներից մեկը, որ գործունեություն է ծավալում շինարարության ոլորտում և ունի 75 հնդիկ աշխատակից, նշեց, որ տարիներ շարունակ աշխատուժի պակասը հանգեցրել էր բանվորների օրական միջին աշխատավարձի բարձրացմանը՝ հասցնելով դա 10-15 հազար ՀՀ դրամի: Եվ սա դեռ այն դեպքում, եթե նման աշխատանք կատարողի հնարավոր լիներ գտնել: Մինչդեռ, ըստ գործատուի, 2023 թվականից սկսած, հնդիկ միգրանտների մեծ հոսքի շնորհիվ, շինարարության ոլորտում ակտիվացումն աննախադեպ է: Նրա խոսքով՝ հնդիկ միգրանտները պատրաստակամ են բանվորական աշխատանք կատարելու օրական 5000-7000 ՀՀ դրամով՝ նույնիսկ էլ ավելի բարեխղճությամբ: Որպես աշխատանքի հիմնական բարդություն՝ գործատուն շեշտեց լեզվական պատնեշը, քանի որ Հայաստան ժամանած հնդիկ միգրանտները շատ հաճախ չեն տիրապետում անգլերենին, որը կարող էր խոսակցական լեզու լինել երկուստեք: Այն հարցին, թե ինչպես է հաղթահարվում այս խնդիրը,

[5] ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_23a_510.pdf, էջ 189 (մուտք՝ 4.02.2024 թ.):

[6] https://armeniasputnik.am/20231120/2030-hazar-hndik-ashkhatanqajin-migrant-ka-hhum-zbvosashrjikner-qich-en-galis-qervob-jan-68859898.html

գործատուն բավական հետաքրքրական պատասխան տվեց: Պարզվեց, որ Հայաստանում արդեն մի քանի տարի բնակվող հնդիկ միգրանտների մեջ կան այնպիսիք, որ բավական վարժ են խոսում հայերեն և շատ հաճախ թարգմանչի դեր են ստանձնում իրենց հայրենակիցների ու հայ գործատուների միջև: Եվս մեկ զարմանալի բացահայտում էր այն, որ հայկական իրականությանը լիովին ինտեգրված հնդիկ միգրանտների մի մասը գերադասում է «հայկականացնել» իր անունը (օրինակ՝ Գաուրը դառնում է Գոռ, և էլի համանման անվանափոխումներ):

Հայաստանի մարզերից մեկում պանրի արտադրությամբ զբաղվող գործարաներից մեկն էլ նշեց, որ տվյալ պահին իր գործարանում մոտ 100 հնդիկ աշխատակից ունի՝ շեշտելով, որ առաջիկայում նախատեսում է այդ թիվն առնվազն կրկնապատկել: Նա նույնպես ընդգծեց հնդիկ միգրանտների դրական հատկանիշները՝ պատասխանատվություն աշխատանքի նկատմամբ, վնասակար սովորությունների բացակայություն (ծխել, խմել և այլն), կեցության նվազագույն պայմաններով բավարարվել (վերջինը թեև հայ գործատուի համար դիտարկվում է որպես առավելություն, սակայն բավական «դաժան» նախապայման է միգրանտների համար):

Հնդիկ միգրանտների պահանջարկը մեծ է գյուղատնտեսության, անասնապահության և խոզաբուծության ոլորտներում: Մի քանի գործատուներ մեզ հետ զրույցում նշեցին, որ, հնդիկ միգրանտների շնորհիվ, աշխատաշուկայում առկա այս բացը հնարավորինս լրացվել է:

Վերոնշյալը, իհարկե, դրականորեն է գնահատվում մեր տնտեսության համար, սակայն «մեդալի» հակառակ կողմի դիտարկումը նույնչափ կարևոր է: 2023 թվականին Հնդկաստանի բնակչության թիվը 1,428 միլիարդ, իսկ Հայաստանինը՝ 2990.9 հազար մարդ էր: Անհամամասնությունն ակնհայտ է, ինչն առաջիկա տարիներին մեր երկրում կարող է հանգեցնել ժողովրդագրական համապատկերի բավական լուրջ փոփոխությունների: Միաժամանակ, հնդիկներն ունեն բազմադարյա պատմամշակութային ժառանգություն ու դա իրենց նոր բնակավայրերում տարածելու լուրջ փորձ՝ հաշվի առնելով այն, որ տարիներ շարունակ Հնդկաստանից միգրացիոն հոսքերն ամենամեծ տեսակարար կշիռն ունեն միջազգային միգրանտների մեջ: Մի կողմից, իհարկե, սա կարող է «հնդկական» գույներով ու համերով համեմել հայկական իրականությունը, բայց մյուս կողմից էլ՝ պարզապես «կլանել» Հայաստանի փոքր տնտեսությունն ու բնակչության քիչ թվաքանակը:

Հայաստանի ու Հնդկաստանի ֆորմալ ու ոչ ֆորմալ ինստիտուտների միջև առկա են հստակ տարբերություններ, որոնք միգրացիայի հիմնական բարդությունն են: Այս պարագայում ընդունող երկրի (տվյալ դեպքում՝ Հայաստանի) ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները բախվում են ծագման երկրի (տվյալ դեպքում՝ Հնդկաստանի) ինստիտուտների հետ, և դրա կրողը միգրանտն է: Սա է պատճառը, որ հայ հասարակությունը ոչ աներկբա է ընկալում հնդիկ միգրանտներին, ընդ որում, հաճախ, ցավոք, հենց նրանց ներկայությամբ: Ազատ շուկայական հարաբերություններն ու աշխարհը թելադրում են, որ տնտեսությունը պետք է գործի առաջարկ-պահանջարկ տրամաբանական շղթայում: Բայց շատ կարևոր է հաշվի առնել, որ միգրացիան նաև սոցիալական երևույթ է, իսկ պետության կարևորագույն գործառույթներից մեկը սոցիալական հա մերաշխության ապահովումն է: Այս համատեքստում, հնդիկ միգրանտների հոսքերի ակտիվացմանը զուգահեռ (նրանց կարիքը, փաստացի, ՀՀ տնտեսությունն ունի), անհրաժեշտ է ակտիվացնել պետական կարգավորման գործիքները, որոնք պետք է ուղղված լինեն ինչպես հնդիկ միգրանտների աշխատանքային պայմանների վերահսկմանը, այնպես էլ նրանց՝ Հայաստանում ապրելու և հայկական իրականությանը միասնանալու հետ կապված խնդիրների մեղմմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պաշտոնական կայք՝ http://www.migration.am/statistics
2. ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 103-Ն որոշում:
3. ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի N 329-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1435-Ն որոշում:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու- 2023» https://armstat.am/file/article/demog_2023_7.pdf
5. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-նոյեմբերին», https://armstat.am/file/article/sv_11_23a_510.pdf
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին» https://armstat.am/file/article/sv_12_23a_510.pdf
7. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_22a_510.pdf
8. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_21a_520_.pdf
9. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-դեկտեմբերին», https://armstat.am/file/article/sv_12_20a_520.pdf
10. https://armeniasputnik.am/20231120/2030-hazar-hndik-ashkhatanqajin-migrant-ka-hhum-zbvosashrjikner-qich-en-galis-qervobjan-68859898.html

Татевик ВАРДАНЯН
Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ, кандидат экономических наук

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

«ИНДИЙСКОЕ КИНО» АРМЕНИИ. КАК ИНДИЙСКИЕ МИГРАНТЫ «ТРАНСФОРМИРУЮТ» ЭКОНОМИКУ РА?

В последнее время в традиционно однородный демографический ландшафт Армении наблюдается заметное привнесение новых индийских элементов. Наблюдаемый из года в год рост числа индийских мигрантов, прибывающих в Армению, меняет некоторые отрасли нашей экономики. Этот феномен «индианизации» в миграционном ландшафте Армении интригует и в некоторой степени неожидан, особенно если учесть историческую роль Армении как источника, а не пункта назначения миграции. В данной статье проводится как количественный, так и качественный анализ последних миграционных тенденций в Армении, уделяя особое внимание растущему притоку мигрантов из Индии. Цель состоит в том, чтобы понять причины этой тенденции и ее последствия для экономики Армении, которая становится заметным игроком в истории «фильма» индийской миграции.

Ключевые слова: *миграция, индийские мигранты, экономика Армении, пересечение границы, статус проживания, работодатели*

Tatevik VARDANYAN
Lecturer of the Chair of International Economic Relations, ASUE, PhD in economics

SECURITY AND CHALLENGESE

"INDIAN MOVIE" OF ARMENIA: HOW ARE INDIAN MIGRANTS "TRANSFORMING" THE RA ECONOMY?

In recent times, there has been a noticeable infusion of new Indian elements into Armenia's traditionally uniform demographic landscape. The observable surge in Indian migrants arriving in Armenia year by year is reshaping several sectors of our economy. This phenomenon of "Indianization" within Armenia's migration landscape is intriguing and somewhat unexpected, especially considering Armenia's historical role as a source rather than a destination for migration. This paper conducts both quantitative and qualitative analyses of the latest migration trends in Armenia, focusing on the growing influx of migrants from India. The objective is to understand the reasons behind this trend and its implications for Armenia's economy, which is transitioning into a notable player in this “movie” of Indian migration.

Keywords: *migration, Indian migrants, Armenian economy, border crossings, residency status, employers*